

ուաքը , ուր ուղեղի ձախ կիսագունդին մէջ կ'զանուի , ճակտին կողմը : Արդ՝ եթէ ձեր ծծմբուկը մօտ բռնէք մէկու մը ճակտին ձախ կողմին , ու խօսել ասաք անոր , պիսի տեսնէք որ ծծմբուկին լուսափայլութիւնը պիսի տւելնայ , փորձի ենթարկուողը ցած թէ բարձր ճայնով խօսի : Մինչդեռ եթէ նոյն ծծմբուկը ենթակային ճակտի աջ կողմին մօտ քըռնէք , ո'չ միայն ծծմբուկին լոյսը չսասակոնար այլ նաեւ կրնայ մարիլ :

Հիանալի պատուհան մ'է որ այսպէս կ'բացուի բնութեան ամենասպազտնի մէկ մասին վրայ :

Աւելորդ է ըսել թէ քնածութեան , մոգականութեան այլ եւ այլ ձեւերուն ինչպէս եւ թշկօփարիի ղաշտօնեաներուն , պաշտամններուն եւ ջատագովներուն ուրախութիւնը չափ ու սահման չունի : Արդէն իսկ երեւակայութեան ազատ համարձակ թոփչք արուած է :

Դիտական քրօնիկազրի մը գործը չէ սակայն յառաջ բերել այն տեսակ հետեւ ութիւններ , որոնք գոնէ առ այժմ , ցնորական են : Անոր պարաւականութիւնն է իրողութիւններ պարզել , ու փորձերու արդիւնքները ներկայացնել իր ընթերցողներուն :

Լօգան

Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ



ՅԱՅԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոն կը տեսնես ձիւնակոյտեր վիթխարի ,
Հոս ծառերն են ճերմակ հաղած՝ ուրուակա՞ն ,
Հոն մշտահոս ահեղ ջուրը կը սառի ,
Հոս աղաքներ խնդան խինդով մանկական :

* * *

Դաշտեր , լեռներ տիսուր , արաւում կը նիրհին ,
Կանանչ չունին , դալար , ծաղիկ վասրուած ,
Ա՛լ հովիւը չերգեր բնաւ հեռուէն ,
Ա՛լ չի մայեր հեղ գառնուկը մոլորած :

Սառն է չիներ մանրանըկար արձաններ ,
Տանիքներէն առկախ ցուպեր բիւրեղէ ,
Ժիր մշակը ա՛լ արտին մէջ չի ցաներ ,
Թոնիրին քով՝ ցորեն , գարի կը մաղէ :
Digitised by A.R.A.R. @

Հեռուն՝ կեղտոտ բագոսի մը սեղանէն
Խոպոտ ձայներ կը բարձրանան կատաղի .
Հոն կը մոռնան ցուրտը , ձիւնը , կըմքոշխնեն
Ումպ մը դինի , ումպ մ'ալ քօնեաք կամ ողի :

Լսէ՛ անդին հրճուանքներու խենթ քրքիջ
Զոր կարձակեն աղջիկ , տղայ , մարդ ու կին .
Երջանիկ չն՞ն երբոր չունին այն հիւծիչ
Բարկ ցաւերը որ հարուածներ տան կեանքին :

Բլուրի մը կողին վրայ կը տեսնե՞ս
Խրճիթ մը կայ փոքրիկ , խարխուլ թշուառին .
Հոն՝ անմեղներ արցունք թափեն աղեկէզ ,
Կը դողդըղան հիւանդ մօրկան սնարին :

Տե՛ս ձկնորսը տոած երկար վերարկուն ,
Նաւակով մը ծովո՞ն վրայ կը յածի .
Կ'արհամարհէ ցուրտը , մահը . միշտ արթուն՝
Կը պրպըտէ այնտեղ դինը իր հացի :

Մինչ հոյակապ տան մը շքեղ սենեակէն
Տժգոյն . վտիտ պատանի մը դուրս կելէ ,
Բարակ , խամրած շրթունքները հեկեկեն
Բիւր լուտանքներ , յուզուած՝ կըսես « յիմա՛ր մ'է » :

* * *

Հոն կը տեսնես ձիւնակոյտեր վիթխարի ,
Հոս ծառերն են ճերմակ հագած՝ ուրուակա՞ն .
Հոն մշտահոս ահեղ ջուրը կը սառի ,
Հոս տղաքներ խնդան խինդով մանկական :

